

# ՀՈՒՎԱԾՆԵՐ

ԶԱՅՆԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ  
ԽԱՅՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵՐԿՈՒ ԵՐԵՎՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

## Գ. Բ. ԶԱՀՈՒԿՑԱՆ

### 1.

«Вопросы языкознания» հանդեսի էջերում 1950-ական թվականների վերջերին և 1960-ական թվականների սկզբներին հայ բարբառների ծագման հարցի շուրջը ծավալված բանավեճի ժամանակ՝ 1960 թ., սույն հոդվածի հեղինակը որոշ առումով կանխելով ժամանակակից լեզվաբանության հիմնական սկզբունքներից մեկը՝ լեզվի փոփոխականության կամ տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքը, գրել է. «Հայոց լեզվի զարգացման ամեն մի փուլում գոյություն են ունեցել անցումնային երևույթներ, տարբեր հնչույթներ կարող էին հանդես գալ դիրքային և տարածքային տարատեսակներով: Շնչեղության, ձայնեղության, լարվածության և ուժի, քմայնության և այլ տարբերությունները որոշակի պայմաններում կարող էին վերածվել տարբերակիչ հատկանիշների և հանգեցնել հնչույթային համակարգում նոր հակադրությունների» (էջ 47): Այս ընդհանրացած դրույթը հայ բարբառագիտության մեջ հանդես է եկել տարբեր դրսևորումներով, որոնց համար երբեմն գործածվել է «օրենք» (իմա՝ «հնչյունական օրենք») անվանումը: Հատուկ ուշադրության առարկա են եղել մասնավորապես բաղաձայնների խլ-լացման հետ կապված երևույթներից երկուսը՝ քմայնացումը և լարվածության կամ ուժի հարաբերակցության փոփոխությունը: Դրանցից առաջինը հայ բարբառագիտության մեջ հայտնի է «Աճառյանի օրենք» անունով, ինչպես այն անվանվել է հենց Աճառյանի կողմից: Երկրորդ երևույթի մասին խոսողները հանդես են եկել տարբեր շարժառիթներով ու մոտեցումներով, և օրենքի անվանման հարցը այստեղ այնքան էլ պարզ չէ: Ինչպես կտեսնենք ստորև, Շ. Աճառյանի ձևակերպած օրենքի մեջ էլ պարզ չէ պատճառի և հետևանքի փոխհարաբերությունը:

Աճառյանն իր օրենքը ձևակերպել է «Քննություն Վանի բարբառի» գրքում. «Վանի բարբառում ա ձայնավորը գտնվելով թրթռուն (= ձայնեղ— Գ. Ջ.) պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է ա (=ä), իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է ա» (էջ 20): Այս օրենքի մեկնաբանության մեջ հարկավոր է նկատի առնել մի քանի հանգամանք.

1. Ա ձայնավորի քմայնացումը Շ. Աճառյանը կախման մեջ չի դնում նախորդ ձայնեղ պայթականի խլացումից, այլ գտնում է, որ «ա ձայնավորը ա-ի է վերածվել նախորդ բաղաձայնի թրթռուն լինելու պատճառով» (\*). նա ընդունում է անցման մի շրջան զրաբարի և Վանի բարբառի միջև, երբ ձայնեղ պայթականներից հետո առկա էր քմայնացած ա, այսինքն սահմանում էր ա > րä > պä հաջորդականությունը.

Ա շրջան (գրաբար)՝	բա	գա	դա	ձա	ջա
	պա	կա	պա	ծա	ճա
Բ շրջան (անցման)՝	բՄ	գՄ	դՄ	ձՄ	ջՄ
	պա	կա	տա	ծա	ճա
Գ շրջան (Վանի բարբառ)՝	պՄ	կՄ	տՄ	ծՄ	ճՄ
	պա	կա	տա	ծա	ճա

2. Մուրադյանը իր «Ինչպե՞ս հասկանալ Աճառյանի օրենքը» հոդվածում<sup>1</sup> «անցման շրջանի» համար օրինակ է բերում Կոզենի բարբառը, բայց միաժամանակ մատնանշում է Թրակացու քերականության հայերեն թարգմանությունը, որտեղ զամ բայաձևի համար նշված է զեամ (իմա՛ գամ) բարբառային տարբերակը: Սրանով իսկ փաստորեն ցույց է տրվում, որ Աճառյանի նշած ժամանակագրական հաջորդականության երկրորդ օղակը պատճառական հարաբերակցության մեջ չէ նախորդ և հաջորդ օղակների հետ՝ ձայնեղներին հաջորդող քմային ձայնավորներ անկախ գոյություն ունեն և՛ գրաբարի շրջանում և՛ մեր օրերում: Միաժամանակ Աճառյանը նշված ձևակերպմամբ ձայնավորի քմայնացման պատճառը փաստորեն չի բացատրում, չի ճիմնավորում, թե ինչո՞ւ պետք է ձայնեղ պայթականի մոտ ձայնավորը քմայնանար, խուլի մոտ՝ ոչ, եթե դրանց միջև իրոք գոյություն ունի ներքին պատճառական կապ:

2. 2. Աճառյանը հակում ունի ա-ի քմայնացման երևույթը տարածելու հաև մյուս ձայնավորների վրա. այսպես, նա գրում է. «այս օրենքով պիտի բացատրենք, թե ինչո՞ւ Ղարաբաղի բարբառում մի կողմից ունենք դու>աի, ծու>ծի, բաև>պէև, դուևը>տուևը (՞), ձուկև>ծիկևը, իսկ մյուս կողմից՝ տուև>տուև, տուր>տու, ֆուև>ֆուև, բուրֆ>բորֆ»<sup>2</sup>:

3. Այսպես կոչված, «Աճառյանի օրենքը», ինչպես այն ձևակերպված է հեղինակի կողմից, հիմնականում բաղաձայնի և կից ձայնավորի հարմարեցման (ակոմոդացիայի) երևույթի արձանագրում է: Լ. Մուրադյանը իր վերևվում հիշված հոդվածում, ցավոք սրտի, այս հանգամանքը հարկ եղած շափով հաշվի չի առել, այսպես կտեսներ, որ իր նշած երևույթները հենց դրա հետևանքն են: Այսպես, նա նշում է, որ քմայնացած ձայնավորները անցման տիպի բարբառային համակարգերում (հմտ. Կոզենի բարբառ) հնչույթային արժեք չունեն (հավելուրդային հատկանիշ են), մինչդեռ ձայնեղների խլացման դեպքում քմային—ոչ քմային հակադրությունը հնչույթային արժեք է ձեռք բերել: Առանձին դեպքերում հարկավոր է լինում պարզել ձայնավորների ու բաղաձայնների քմայնացման աստիճանը և որոշել՝ հնչույթային հակադրությունը հատկապես բաղաձայնակա՞ն է, թե՞ ձայնավորային: Այդ հարցը հեշտ է լուծվում, օրինակ, ռուսերենում. այսպես МАТЬ և МАТЬ ձևերի հակադրությունը դիտվում է որպես քմային և ոչ քմային М-երի հակադրություն, մինչդեռ ձայնավորը երկու դեպքում էլ քմային չի համարվում (ձայնավորի հարմարեցումը թույլ է): Եթե այնուամենայնիվ ընդունենք, որ «Աճառյանի օրենքը» ճիշտ է բարբառների որոշ խմբի համար, որոնցում ձայնավորների քմայնացմանը հետևել է նրանց կողքին գտնվող բաղաձայնների խլացումը, ապա բարբառների մի այլ խմբի համար պիտի ձևակերպել մի այլ օրենք, ըստ որի ձայնավորների խլացումը առաջ է բերում վերջիններիս քմայնացում, որ կարող է ուղեկցվել կողքի ձայնավորների քմայնացման տարբեր աստիճաններով, և նախկին ձայնեղի ու խուլի հա-

<sup>1</sup> «Բանբեր Երևանի Ռամպարաճի», 1978, 2:

<sup>2</sup> Լ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952, էջ 21:

կադրությունը երբեմն փոխարինել քմայնացած ու շքմայնացած խուլերի հակադրությամբ: Ահա թե ի՛նչ է գրված այս կապակցությամբ մեր «Հայ րաբառագիտության ներածության» 49—50-րդ էջերում. «Ընդհանրապես մեծ դժվարություններ են հանդիպում քմայնացած բաղաձայնների ու ձայնավորների փոխհարաբերության հնչութաբանական գնահատման հարցում: Գերմանական լեզուների և բարբառների պատմությունից հայտնի է, որ ձայնեղներից ծագող խուլերը, ի տարբերություն խուլերից ծագող խուլերի, սովորաբար քմայնացած են լինում: Այս դեպքում հնարավոր է քմայնացած և շքմայնացած խուլերի հակադրություն, որ կարող է ուղեկցվել ուժեղ և թույլ խուլերի հակադրությամբ, ընդ որում տարբեր դեպքերում պետք է կոնկրետ կերպով որոշվի, թե սրանցից ո՛րն է էականը (ռեկանտը): Հնչութաբանական նուրբ վերլուծությունը պետք է ցույց տա նաև, թե ո՛ր դեպքում մենք գործ ունենք քմայնացած ու շքմայնացած բաղաձայնների հակադրության հետ, որ ուղեկցվում է քմայնացած ու շքմայնացած ձայնավորների դիրքային (ակոմոդացիոն) տարբերությամբ, և որ դեպքերում քմայնացած ու շքմայնացած ձայնավորների հակադրության հետ, որ ուղեկցվում է բաղաձայնների դիրքային քմայնացման տարբերությամբ: Տարածամանակյա հնչութաբանության խնդիրն է պարզել այն հարցը, թե այս կամ այն դեպքում ո՞րն է առաջնային՝ բաղաձայնների, թե՞ ձայնավորների քմայնացումը»:

Նշենք, որ «ձայնեղ բաղաձայնների քմայնացում» ասելով մենք նկատի ենք ունեցել ոչ միայն պարզ ձայնեղների, այլև շնչեղ ձայնեղների քմայնացումը (հմմտ. վերոհիշյալ հոդվածը, 1960, էջ 47, այսպես կոչված Ը տիպը): Այդ մասին մենք ժամանակին տեղյակ ենք պահել է. Աղայանին և Թ. Դանիելյանին, որոնցից առաջինը աշխատում էր «Գրաբարի քերականություն», երկրորդը՝ «Մալաթիայի բարբառը» թեկնածուական ատենախոսության վրա. երկուսն էլ այդ մասին գրել են իրենց աշխատություններում (Աղայան, նշվ. աշխ., էջ 152, ծան., Դանիելյան, նշվ. աշխ., էջ 22, ծան.), այսինքն՝ առաջնությունը իրենց շեն վերագրել: Թ. Դանիելյանը հանգել է այն մտքին, որ շնչեղ ձայնեղներից ծագած շնչեղ խուլերը քմայնացած են, շնչեղ խուլերից ծագող շնչեղ խուլերը՝ ոչ, և որ, օրինակ, արևատահայերենում այս դեպքում առկա է ոչ թե երկաստիճան խլազուրկ (փ—բ), այլ եռաստիճան (ոչ քմային փ—քմային փ—ձայնեղ ք կամ փ—փ'—բ) հակադրություն: Միաժամանակ նա գտնում է, որ Մալաթիայի բարբառը նախկին ձայնեղներին համապատասխանող շնչեղ խուլերը, ի տարբերություն խուլ շնչեղներից ծագողների, օժտված են որոշ ձայնեղությամբ և նրան հաջորդող ձայնավորներն ունեն ավելի բաց արտասանություն:

Այժմ խոսենք բաղաձայնների ձայնեղության ու խլության և ուժի ու լարվածության փոխհարաբերության մասին: Հայտնի է, որ բաղաձայնների ձայնեղության տարբերությունները ուղեկցվում են ուժի ու լարվածության տարբերություններով: Հայտնի է նաև, որ ձայնեղ բաղաձայնները սովորաբար ավելի թույլ են (արտասանվում են ավելի թույլ լարվածությամբ), քան խուլերը: Այստեղից բխում է, որ ձայնեղության փոփոխությունների հետ կապված կարող է հանդես գալ ուժի և լարվածության նոր հարաբերակցություն:

է. Աղայանը, որ, բնականաբար, ծանոթ է եղել «Вопросы языкознания» հանդեսի մեր վերոհիշյալ հոդվածին, ուշադրություն է դարձրել միայն այն դեպքի վրա, երբ ձայնեղները խլանում են: Իր «Գրաբարի քերականություն» մեջ (1964, էջ 155, ծանոթություն) որոշ կասկածով նա գրում է. «Արդոք ձայնեղներից ստացված խուլերը շե՛ն հակադրվում սովորական խուլերին լարվածության—ոչ լարվածության հատկանիշով»:

1972 թ. լույս տեսած մեր «Հայ բարբառագիտության ներածություն» մեջ, որ, բնականաբար, շատ ավելի վաղ է ձեռնարկվել, մենք հարցը դրել ենք ավելի լայն առումով՝ հաշվի առնելով ոչ միայն ձայնեղների խլացման, այլև խուլերի ձայնեղացման հետ կապված ուժի և լարվածության հարաբերակցության փոփոխությունները: Այստեղ նշված է, որ խուլերի ձայնեղացման և ձայնեղների խլացման ժամանակ լինում են դեպքեր, «երբ հիմնական տարբերակիչ հատկանիշը դառնում է ուժեղության և թուլության հակադրությունը. «Հայտնի է, որ նախկին խուլերից ծագող ձայնեղները ավելի ուժեղ են, նախկին ձայնեղներից ծագող խուլերը ավելի թույլ» (էջ 49): Այստեղից բխում է, որ խուլերի ձայնեղացման և նախկին ձայնեղների պահպանման դեպքում կարող է հանդես գալ ուժեղ և թույլ ձայնեղների, իսկ ձայնեղների խլացման և նախկին խուլերի պահպանման դեպքում՝ թույլ և ուժեղ խուլերի հակադրություն:

1995 թ. ներկայացրած «Անատոլիայի նորահայտ հայ բարբառները», դոկտորական ատենախոսության մեջ և սրա սեղմագրում Ն. Մկրտչյանը ցույց է տվել, որ Սիվրի-Հիսարի բարբառում տեղի է ունեցել հենց այն, ինչ ընդհանուր կերպով նշված է մեր 1960 թ. հոդվածում և հաստատուն կերպով ձևակերպած «Հայ բարբառագիտության ներածություն» գրքում, այլև որոշ կասկածով ասված է է. Աղայանի գրքում: Ըստ Ն. Մկրտչյանի՝ Սիվրի-Հասիրի բարբառում ձայնեղների խլացման հետ «տեղի է ունենում ուժեղության և թուլության հակադրություն և ոչ թե ձայնեղության և խլության» (սեղմագիր, 1995, էջ 28)<sup>3</sup>:

Այժմ մեզ մնում է պարզել լեզվաբանական, հատկապես հնչյունական օրենքի հասկացության հետ կապված տեսական մի քանի հարց, առանց որոնց մեկնաբանության հնարավոր չէ գնահատել հայերենի հնչյունաբանության մեջ ձևակերպված օրենքների բնույթն ու էությունը:

1. «Օրենք» բառը բազմիմաստ է այն աստիճան, որ հարկավոր է հենց սկզբից սահմանազատել այդ բառի ընդհանուր փիլիսոփայական իմաստը նրա իրավաբանական իմաստից: Տվյալ դեպքում լեզվաբանության մեջ գործող օրենքների հիմքում ընկած է բառի ընդհանուր փիլիսոփայական իմաստը, թեև, ցավոք սրտի, այն ոչ միշտ է խստորեն կիրառվում: Ըստ այդ ընդհանուր փիլիսոփայական իմաստի՝ օրենքը տարբեր երևույթների ներքին՝ էական և անհրաժեշտ, կապն է. օրենքի ձևակերպումը պահանջում է երևույթների խորը իմացության հիման վրա այնպիսի ընդհանրացում, որ հնարավորություն է տալիս կապելու առաջին հայացքից իրար հետ այնքան էլ կապ չունեցող երևույթները:

Լեզվաբանությունը, կարելի է ասել, իսկական գիտություն դարձավ այն ժամանակ, երբ նրա մեջ մուտք գործեց օրենքի գաղափարը, և այդ բանն սկսվեց, այսպես կոչված, հնչյունական օրենքների ձևակերպումից: Պարզվեց, որ հնչյունական փոփոխությունները կատարվում են խիստ օրինաչափությամբ, և ամեն մի ձևակերպված օրենքի բացատրություն պետք է բացատրել: Այսպես, գերմանական բաղաձայնական համակարգը ընդհանուր հընդեվրոպականի համեմատությամբ ենթարկվում է որոշակի տեղաշարժի՝ պայթական շնչեղ ձայնեղները վերածվում են պարզ ձայնեղների, պարզ ձայնեղները՝ խուլերի, խուլերը՝ շփականների. այս օրինաչափ համապատասխանությունների համակարգը հայտնի է որպես Գրիմի օրենք, թեև ինքը Գրիմը

<sup>3</sup> Հասկանալի չէ միայն, թե Ն. Մկրտչյանը երևույթն անվանելիս ինչու է մոռացել իր նախորդներին, որոնց նա նախապես այդքան բարեխղճորեն հիշատակում է, և օրենքը կոչել:.. «Մկրտչյանի օրենք»:

այն իր անունով չի կոչել և սկզբնապես փոքր-ինչ այլ կերպ է հասկացել: Հետագայում պարզվեց, որ Գրիմի օրենքի գործողության մեջ կարծեք թե նկատվում են ինչ-որ բացառություններ. այնտեղ, որտեղ պետք է լինեն խուլերից ծագող խուլ շփականներ, հրեմն հանդես են գալիս ձայնեղներ: 1877 թ. Կ. Վեռները ձևակերպեց մի նոր օրենք, ըստ որի այդ տեղի է ունենում անշեշտ ձայնավորներից հետո. այս օրենքը կոչվում է ըստ ձևակերպողի «Վեռների օրենք» (ինքը Վեռները նույնպես օրենքն իր անունով չի կոչել): Հետագայում հնդեվրոպական լեզուների համար ձևակերպվում են նաև այլ օրենքներ (Բարթոլոմեի, Գրասմանի, Լախմանի, Սոսյուր-Ֆորտունատովի և այլն)՝ ավելի կամ պակաս ընդհանրացած գործողությամբ: Գրանցից մեկը 1967 թ. մեր «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» 280-րդ էջում ձևակերպված այն օրենքն է, ըստ որի «առաջին քմայնացման հետևանքով հայերենում հանդես են գալիս սուլական կիսաշփականներ և շփականներ, երկրորդի հետևանքով՝ շշականներ՝ \*g'h, \*g', \*k>ձ, ծ, ս և \*g'h (e, i, i), \*g(e, i, i), \*k(e, i, i)>ջ, ն, շշ. ծանոթության մեջ միայն գրված է, որ օրենքը սահմանված է հեղինակի կողմից»: «Ջահուկյանի օրենք» անհամեստ նշումը չկա նաև մեր կողմից 1976 թ. ձևակերպված հետևյալ օրենքի համար. «Հնդեվրոպական բաղաձայնական այն կապակցությունները, որոնց մեջ անցումը մեկ բաղաձայնից մյուսին չի բնորոշվում լարվածության աճով (բացվածքի նվազեցմամբ՝ շփական + պայթական» հաջորդականությամբ) կամ (ձայնորդների հաջորդման դեպքում) լրացուցիչ ուղղակի երանգի հանդես գալով, պարզվում են կամ վերածվում նշված հաջորդականությունն ունեցող շարքերի»<sup>4</sup>: Նման վարքագիծ մենք հանդես ենք բերել նաև հայ բարբառների ուսումնասիրության ժամանակ՝ մտածելով, որ գործ ունենք գիտնականների հետ:

2. Թեև չի արձանագրված հատուկ կերպով հնչյունական օրենքների պատմության մեջ, բայց ինքնին հասկանալի է, որ հնչյունական օրենքները հիմնականում պատմական հիմք ունեն, արձանագրում են պատմական փաստը, կամ պատմական փոփոխության հետևանքը: Լեզվաբանական գրականության մեջ սկսած 19-րդ դարի 70-ական թվականներից «հնչյունական օրենք» ասելով սովորաբար հասկանում են հնչյունական ամեն մի օրինաչափ համապատասխանություն, որ հանդես է գալիս միևնույն ծագումն ունեցող միավորների տարբեր դրսևորումների միջև՝ լինեն դրանք նախալեզվի և որևէ կոնկրետ լեզվի, որևէ լեզվի զարգացման տարբեր փուլերի, թե միևնույն լեզվի բարբառների միջև:

3. Ինչպիսի՞ն է հնչյունական օրենքների ընդհանրականության աստիճանը: Այս հարցը հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել, բայց կարելի է ասել, որ կան տարբեր ընդհանրականության օրենքներ. կան օրենքներ, որոնք գործում են միայն մեկ բարբառի կամ բարբառների մեկ խմբի սահմաններում. կան օրենքներ, որոնք գործում են մեկ լեզվում կամ լեզուների մեկ խմբում. վերջապես, կան օրենքներ, որոնք համընդհանուր բնույթ ունեն, գործում են բոլոր լեզուներում և ունեն, այսպես կոչված, հանրույթների (ունիվերսալիաների) արժեք: Համապատասխանաբար օրենքը կարող է հայտնագործվել կամ լինել պարզապես հանրույթի պարզ դրսևորում որևէ լեզվում: Կան, բնականաբար, դեպքեր, երբ օրենքը ձևակերպվում է որևէ կոնկրետ լեզվի կամ որևէ բարբառի համար, բայց հետո պարզվում է, որ այն համեմատաբար ընդհանուր բնույթ ունի՝ բացարձակ կամ մասնակի (վիճակագրական) հանրույթ է: Մենք վերևում տեսանք, որ ձայնեղների խլացման

<sup>4</sup> «Հանդես ամսօրյա», 1976, թ. 1—12, էջ 269:

ժամանակ նկատվող քմայնացումը կամ նախկին ձայնեղններից առաջացած խուլների՝ բուն խուլների շարունակությունը կազմող խուլների համեմատությամբ ավելի թույլ լինելը ընդհանուր բնույթ ունեն, բայց առայժմ դժվար է ասել՝ ո՞ր աստիճանի, քանի դեռ հատուկ ուսումնասիրություններ չեն կատարված: Գեռ 19-րդ դարի 2-րդ կեսից լեզվաբանության մեջ ընդհանրացել են հնչյունական օրենքի հետ կապված հետևյալ երկու դրույթները. առաջին՝ հնչյունական օրենքները գործում են մեր կամքից անկախ, այսինքն՝ հնչյունական փոփոխությունները գիտակցական բնույթ չունեն. երկրորդ՝ նրանք սահմանափակված են տեղով և ժամանակով, այսինքն՝ գործում են որևէ տարածքում և որևէ ժամանակաշրջանում՝ առանց պարտադիր լինելու այլ տարածքների և այլ ժամանակաշրջանների համար. այս դրույթը հնարավորություն է տալիս լուծելու ժամանակագրական դանազան հարցեր: Ինչ վերաբերում է հնչյունական օրենքների պատճառաբանվածության հարցին (նրանց հանդես գալու բուն պատճառների որոշմանը), ապա այն եղել և մնում է տեսական լեզվաբանության, հատկապես հնչյունաբանության կարևոր խնդիրներից մեկը և ամեն դեպքում լուծվում է կոնկրետ հետազոտություններով:

Ամփոփելով հողվածը՝ հարկ ենք համարում նշել հետևյալը: Գիտության զարգացումն ընթանում է ընդհանրապես օրյեկտիվ ճանապարհով, բայց ոչ ուղղագիծ, կան դեպքեր, երբ դեր են խաղում սուբյեկտիվ հանգամանքները: Որքան ավելի լավատեղյակ և օրյեկտիվ են հետազոտողները, այնքան ավելի արագ և նպատակասլաց է ընթանում գիտության զարգացումը: Գիտնականը պարտավոր է լինել լավատեղյակ և օրյեկտիվ, ճիշտ գնահատել իր նախորդների և իր արածը: Սա նույնպես օրենք է, գիտության զաղգացման իսկական օրենք:

**Г. Б. ДЖАУКЯН — О двух явлениях, связанных с оглушением звонких смычных и аффрикат.** — Р. Ачарян в 1952 г. для ванского диалекта установил закономерность, согласно которой после глухих смычных и аффрикат, восходящих к прежним звонким, имеются палатализованные гласные, а после прежних глухих — непалатализованные. Автор статьи указывает, что оглушение согласных иногда приводит к их палатализации и что палатализация гласных в ванском диалекте является результатом их аккомодации — влияния предыдущих палатализованных согласных. Если сглашение звонких смычных и аффрикат в ванском и некоторых других восточноармянских диалектах приводит к появлению палатализованных согласных и гласных, то в сиврихисарском и некоторых других западноармянских диалектах оно приводит к появлению нового противопоставления в системе глухих согласных по силе произношения: прежние более слабые звонкие противопоставляются прежним более сильным глухим.